ներկայութեան Սրբոյ Պատարագին, և 'ի լուր բարեպաշտութեան ժողովրդականաց Եկեղեցւոյն կարի յոյժ արժանաւոր դատեցաւ. որպէս զի իւրաքանչիւր ոք լսելով զաղդասիրական բարեջանութիւնն, զոր արդեամբք փայլեցուցին առաքինասիրացն անձինք առ մշտնջենաւոր հաստատութիւն կուրեւոր դրամագումարի իրիք յանուն Նորակառոյց Ազգային Դպրատանցս, ինքեանք ևս նովին ազգասիրութեան ոգւով վառեալք յորդորեսցին առ 'ի նոյն մասնակցութիւն, և զմիմեանս իսկ յորդորեսցեն առ 'ի լինել միանգամայն հաղորդակից նոցին յիշատակութեանց և փառացն պսակակից 'ի Քրիստոս Յիսուս 'ի Տէր մեր։

Ի ԲԱՆԻՑ ԹԱԳԱՒՈՐԻՆ ՆՈՒՇՐԷՎԱՆԻ (1)

Ամենայն մարդ, որ գիտէ զչափս անձին իւրոյ, յինէն ողջոյն մատուցէք։
Արժանաւորացն 'ի յիմ գանձէն բաժին հանեցէք։
Զանձնահաճ մարդն յինէն 'ի զատ պահեցէք։
Ամենայն ինչ, որ անպատշաճ է, մի խօսիք։
Եւ զոր անքննին է, մի քննէք։
Եւ յամենայն իրս ստիպումն մի արկանէք։
Յամենայն գործս, յոր և կամիք ձեռն արկանել, զսկիզբն և զկատարումն նորին քննեցէք։
Զձեզ 'ի մանկութեան բարի անուամբ հռչակեցէք։
Զփորձեալն մի եւս դարձեալ փորձէք։
Եւ զփորձեալն ընդ ամփորձին մի փոխանակէք։
Ընդ ամփորձ մարդոյ գոտեմարտութիւն մի առնէք։
Վասն բեկելոյն և այրեցելոյն և տուրս շնորհելոյն յետոյ մի ապաշաւէք։
Ի չար անուն տեղւոջ մի բնակիք։
Ի հեղեղատ տեղի մի բաղմիք։
Ի գողոց ուխտադրութիւնս մի ընդունիք։
Ի դրացութիւնս թագաւորի տուն մի շինէք։
Ի նորելուկ մարդոյ պարտս մի առնէք։
Ի դրունս տանց ձերոց խանութս մի դնէք։
Ի չար դրացեաց հեռաբնակ կացէք։
Առ ընթեր կուսոյ հուպ մի երթայք։
Անուշեկից 'ի ճանապարհ մի երթայք։
Առ արծաթագին ծառայս կռիւս և աղմուկս մի առնէք։

(1) Այն խրատական խօսքերն քաղուած են Ս. Աթանասիոս Թանգարանի գրչագիրներեն։

digitised by A.R.A.R.@

Ո՛վ որք յառակսանաց և 'ի նախատանաց ոչ երկնչի , 'ի նմանէ հեռագոյն կացէք .
Ընդ մանկունս խորհուրդ մի առնէք .
Հրամանաւ կանանց չար գործ մի գործէք .
Սակաւ մնասիւ զհաւատարիմ ծառայս 'ի վայր մի ընկենուք .
Զամենայն կտաւ և զբան , տասն անգամ չափեցէք՝ և ապա կտրեցէք .
Զձեր կեանքդ անգիտութեամբ մի անցնէք .
Զայլոց կռիւ 'ի ձեր անձնդ մի առնուք և կռուիք .
Զկռիւն՝ միջակ և համբերելով արարէք .
Սկիզբն նոր տնկելոյ արարէք , և ապա զհինն խլեցէք .
Ցօտար հող՝ ծառ և բոյս մի տնկէք .
Ի հողահատ տեղիս սերմն մի ձգէք .
Զօտար կին և պառաւ 'ի տուն մի թողուք .
Օտար իրաց սակս աւելի քան զտէրն մի տրտմաւիք .
Ի մէջ այր և կնոջ եւ եղբարց՝ ատելութիւն մի ձգէք .
Կին 'ի ճանաչաւորաց և 'ի մօտեւորաց առէք .
Թագաւոր թէպէտ և խոնարհի , դուք մի համարձակիք .
Իշխանաւոր երբ սակաւ սէր ցուցանէ , զինքն մեծ սիրեցէք .
Եւ թագաւոր որ՝ թէպէտ և փանաքի լինի , նուաստագոյն մի տեսանիցէք .
Ի մեծամեծաց երկիւղիւ կացէք .
Եւ զսակաւ ձիրս թագաւորաց՝ մեծագոյն գիտացէք .
Ընդ բախտաւորս և ընդ տովլաթաւորս մի նախանձիք .
Որ տէր է գրչի՝ և իմաստութեան՝ զնոսա թեթեւ մի տեսանէք .
Որ որք առաւել գիտէ քան զձեզ , զնա աւելի պատուեցէք .
Ի բանաստեղծ (1) մարդկանց պատրաստ կացէք ։
Հետ ամեն մարդոյ՝ սէր և մօտեւորութիւն ընդ ժամանակին դիք .
Ի յամենայն մարդոյ զբարի խօսքն ընդունեցէք .
Պիղծ խօսիցն՝ պիղծ պատասխանի մի տայք .
Ցամենայն մարդոյ խօսս մի վստահանայք .
Ի ցածէն և յանգիտէն խնդիրք մի խնդրէք .
Ի մէկ տեսն յամենայն մարդոյ հետ մի փաթթիք .
Ամենայն իրաց և ամենայն մարդոյ շուտ մի հաւատայք ։
Պարտականն պինդ բռնեցէք , և թոյլ մի թողուք .
Ցայսմ աւուր բանն 'ի վաղն մի ձգէք ։
Զդեղն յառողջութեան ժամն խմեցէք ։
Ի տղայութեան ժամն զծերութիւնն 'ի միտ ածէք .
Եւ զծերութեան բանն՝ 'ի տղայութեան ժամն հոգացէք .
Եւ յառողջութեան ժամն՝ զհիւանդութիւնն 'ի միտ ածեցէք ։
Եւ յառատութեան ժամն՝ զսղութիւնն յիշեցէք .
Ի թշնամութեան ժամանակին՝ սիրոյ տեղ պահեցէք .
Զձեր խորհուրդս՝ մարդոյ բնաւ (2) մի ասէք .

(1) Կամի ասել բանսարկու , այսոյ վերայ զգուշութիւն առնելով .
(2) Բնաւ .

digitised by A.R.A.R.@

Ընկեր զայն սիրեցէք, որ իւրմէն իր մի շահիք ։
Ամենայն իրաց զհերիքն սիրեցէք ։
Զանգէտ սիրելին՝ մեծ թշնամի գիտացէք ։
Ցիմաստուն թշնամւոյն՝ մի վախէք ։
Եւ ձեզէն՝ զձեզ ՚ի փորձութիւն մի արկանէք ։
Համապազ այլոց ձեռօք զօձն բռնեցէք ։
Ի բարկացող արանց՝ պատրաստ կացէք ։
Տգիտաց՝ և դիւահարաց՝ և արբեցողաց՝ խրատ մի տայք ։
Ի յանզգամ կնոջէ պատրաստեցարուք ։
Անհաշտաբար առ ամենայն գործս՝ ձեռն մի արկանէք ։
Զկերակուրս և զըմպելիս՝ առանձնաբար մի ընթրէք ։
Անհրաւիրակ հիւր ումեք մի լինիք ։
Ընդ բարեբախտիկ արանց՝ մի հակառակիք ։
Զգործն ժամուն մի անցուցանէք ։
Եւ յամենայն ժամ՝ զհանդերձեալն ՚ի միտ ածէք ։

ԿԱՐԵՒՈՐ ԾԱՆՈՒՑՈՒՄՆ

Առաքելական Ս. Աթոռոյս Վարչութիւնն կը խնդրէ Ազգային բոլոր Լրագիրներէն հրատարակել, որ Քօլերայի հիւանդութիւնն վաղուց արդէն անհետացած է ՚ի սպառ Աստրախանի և Պաղեստինի քաղաքներէն, և Երուսաղէմի ուխտաւորութեան համար բընաւ երկիւղի և կասկածանաց տեղի չ՚է մնացած ։ Ընդ սմին կը յաւելու, որ շատ աղքատիկ ազգայիններ, չը գիտցուիր ի՞նչ միջոցներով կամ մուրացկանութեամբ յԵրուսաղէմ կը դիմեն, եւ ո՛չ միայն անկարող կը գտնուին փոքրիկ նուէր մի անգամ հատուցանել, ըստ սովորութեան բարեպաշտ ուխտաւորաց. այլ Ս. Աթոռս, չը նայելով իւր բազմադիմի ծախուց եւ մեծագումար պարտուց, կըստիպուի ո՛չ միայն եկած օրէն ՚ի վեր հայ՝ և կերակուր տալ այսպիսի աղքատներուն, այլ նաև ճանապարհի ծախքն հոգալ, որ կարողանայ Երուսաղէմէն դառնել ։ Արդ՝ յատկապէս կը խնդրուի բոլոր Գեր. Վեճակաւոր Առաջնորդներէն և Փոխ-Առաջնորդներէն, Արժ. Քահանաներէն և բարեջան Թաղական Խորհուրդներէն, որ ուշադրութիւն դարձնեն այս մասին և աղքատ ու անկարող մարդկանց խրատ կարդան և չը թողատրեն ընդ ծով և ընդ ցամաք թափառական լինիլ, ուխտաւորութեան պատրուակաւ յԵրուսաղէմ դիմել և Ս. Աթոռոյս վերայ ծանրանալ, որ իւր յատուկ ծանրութեան տակ կը ճնշուի արդէն ։

Ամենէն ցաւալին այս է, որ այն աղքատ եկուորներուն մէջ կան նաև

digitised by A.R.A.R.@